

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Վերջին ժամանակներում մեր լրագրները կպեյ էին մի քանի տառերի պոչից ու ձգձգում էին աջ ու ձախ: Առաջարկում էին համադրամար էջմիածնում ուղղագրութեան համար, ևլն. ևլն:

Ցաւօք սրտի պիտի ասել, որ հէնց նոյն իսկ այդ յօդուածները ծայրէի ծայր լի էին մեղանշումներով Հայոց լեզուի դէմ, այսինքն սխալներով և անճոռնի ոճերով: Ահա մի քանի օրինակներ.

1) Փոխանակ դրելու և ասելու՝ իմ վերայ, ես վերայ, մեր վերայ, ձեր վերայ, պարոնները գրում են, ինձ վերայ, ձեզ վերայ, ևլ. ևլն: Հայոց լեզուի քերականութեան կանոնները պահանջում են ի վերայ իմ, ի վերայ քո, ի վերայ մեր, ի վերայ ձեր և այլն:

2) Փոխանակ իմ համար, ես համար մեր համար, ձեր համար. գրում են ինձ համար. քեզ համար, մեզ համար, ձեզ համար. այն ինչ Հայոց լեզուի կանոններով պահանջւում են վառն իմ, վառն քո, վառն մեր վառն ձեր:

Տաճկահայերը կարծում են թէ մի փոքր մեղմացնում են վերոյիշեալ սխալները-խօսքին աւելացնելով ի տառը մեղի համար, քեզի վերայ, ևլն. բայց դորանով թողութիւն չեն ստանալ:

Եթէ պարոն ուսուցիչները, դերասանները, թղթակիցները, իրենց հեղինակութիւնը շօշափուած կը համարեն և չեն ուղղել իրանց սխալները, դոնէ նոր սերունդը թող ուշ դարձնի մեր լեզուի վերայ:

Գոնէ թող օրինակ առնեն Ռուս լեզուից на меня на васъ для меня, для васъ ևլն. ևլն:

3) Փոխանակ կը գրեմ, կը կարդամ, կ'առեմ, կ'աղօթեմ, ց'այսօր, կ'օժուի, գրում են. կգրեմ, կկարդամ, կասեմ կաղօթեմ ցայսօր, կօժուի, դուքս են ձգում ը տառը և մակաղէաը (') և այսպիսի հազար ու մի սխալներ:

4) Անճոռնի թարգմանութիւններ: Пользуясь случаемъ— օգտուելով դէպքով: Եթէ դժուարանում են գործ ածել իսկական Հայոց ոճը՝ օգուտ քաղել հանդամանքից, դոնէ թող գրեն, օգտուել դէպքից:

Եթէ «Մշակ»ի խմբագիրը պարոն Միրաքեանի յօդուածում (25 ն մայիսի 1910 թ. № 111) փոխէր ոճը, «չօգտուել կատակի իրաւաբանական հանդամանքից (փառախից),» կարժեմ որ պարոն Միրաքեանը չէր նեղանալ և դատի չէր ենթարկել ոչ ոքի:

5) Այսպիսի մեղսագործութիւններ նշմարելի են, լեզուի ընդդէմ, բայց լրագրներից, այլ և ուսուցիչների յօրինած ձեռնարկների, և թարգմանութիւնների մէջ իսկ:

6) Ուսուցիչները դատարանում, դերասանները բեմից, անճսուների սխալներով վերաւորում են հանդիսականների լսելիքը. առաւել կօկիծն այն է, որ խեղճ նոր սերունդը (թէ և այն էլ շատ սակաւ է հայերէն խօսում) ըմբռնում է այդ սխալները, և ընթանում է նոյն շաւղով:

7) Երբ ես կարդում եմ լրագրի որեւիցէ յօդուած՝ իսկոյն մտաբերում եմ իմ խնկելի մեծ ուսուցիչներին—Նազարեանը. Եմինը և Մսերեանը—որոնք սրտնեղութեամբ էին վերաբերւում լեզուի այդպիսի ծաւաւումուն:

8) Անցեալներում մի երիտասարդից լսեցի այսպիսի մի զրոյց, «Շատ վախտ է սհաթս չեմ քօքել, չի բանում» ես համեատ կերպով նկատեցի նրան. միթէ առաւել լաւ չի լինի ասէք «շատ ժամանակ է ժամացոյցս չեմ լարել». «Ահ ալատասխանեց նա, Эти слова у насъ получили гражданственность. Ի հարկէ, ես իսկոյն հեռացայ, որպէս զի առաւել լսելիքս չծակի ուսումնաւարտ երիտասարդի խօսակցութիւնը, որ լսել է զանգակի ձայնը՝ բայց չի իմանում թէ որ կողմից է դալիս—դաշտից թէ անտառից: Ազատ պահի, Ատուած մեզ այսպիսի դատաւորներից:

Մեր ընկերներից մէկը շատ վաղուց սկսել էր թարգմանել գրաբառից «Արշակ Բ» ողբերգութիւնը, որ բերեց և կարդաց մեր համար: Հանգուցեալ Ս. Շահաղիդը լսելով շատ անյաջող և կոպիտ թարգմանութիւնը, յանկարծ բացահանչեց ծիծաղաշարժ. «Զարթնի՛ր Եղիշէ, տես ինչպէս քո սքանչելի, ոսկէքերան լեզուն աղաւաղում են թռռներդ:

Վերոյիշեալների նման, սխալները գործ են տծում հազարներով: Բայց ցանկալի է, որ ուշ դարձնեն որպէս զի դոնէ ձեմարանի և Թեմական դպրոցների աշակերտները—ապագայ հայախօսութեան սիւները—խօսեն և գրեն, փոքր ինչ կանոնաւոր եղանակով:

ՅԱՆՈՒՐԱՐ.